ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Նշվածներից ո՞րն է օգտագործվում 750 հարգի ամուսնական մատանու փայլեցման ժամանակ:

1) վալցը
2) ֆիլեռը
3) փայլեցման սարքը
4) ինժեկտորը

2 Որքա՞ն է 135մմ X 82մմ X 4 մմ չափսերով 999,9 հարգի պլատինի ձուլակտորի քաշը (21.45 գ/սմ³):

1) 949.625 գ
2) 949.704 գ
3) 949.406 գ
4) 949.806 գ

3 Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 32.5 գրամ 750 հարգի ոսկու համաձուլվածքից 585 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ:

1) 9.16 գ
2) 9.75 գ
3) 9.60 գ
4) 9.50 գ

4 Որքա՞ն է 125 մմ X 90 մմ X 6 մմ չափսերով 999,9 հարգի արծաթի ձուլակտորի քաշը: (10.50 գ/սմ³):

1) 708.85 գ
2) 708.75 գ
3) 708.485 գ
4) 708.775 գ

5 Քանի՞ գրամ 999,9 հարգի ոսկի է անհրաժեշտ՝ 35 գրամ 585 հարգի ոսկու համաձուլվածքից 750 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար։

1) 23.7 գ
2) 22.5 գ
3) 23.1 գ
4) 22.2 գ

6 Նշված մետաղներից ո՞րն է ամենադժվարահալը։

1) պլատինը
2) պալադիումը
3) ոսկին
4) իրիդիումը

7 Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 7.5 գրամ 999,9 հարգի ոսկուց 375 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ։

1) 12.88 գ
2) 12.48 գ
3) 12.23 գ
4) 12.65 գ

8 Որքա՞ն է 180 մմ X 85 մմ X 4 մմ չափսերով 999,9 հարգի ոսկու ձուլակտորի քաշը (19.3 գ/սմ^3)։

1) 1181.16 գ
2) 1085.25 գ
3) 1315.82 գ
4) 1281.15 գ

9 Նշվածներից ո՞րը թանկարժեք քար չէ։

1) զմրուխտը
2) նեֆրիտը
3) սապֆիրը
4) ռուբինը

10 Որքա՞ն է 170 մմ X 100 մմ X 8 մմ չափսերով 999,9 հարգի ռոդիումի ձուլակտորի քաշը (12.4 գ/սմ³):

1) 1686.4 գ
2) 1686.8 գ
3) 1686.2 գ
4) 1686.6 գ

11 Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

1) 417
2) 913
3) 585
4) 333

12 Քանի՞ գրամ 999,9 հարգի արծաթ է անհրաժեշտ՝ 15 գրամ 875 հարգի արծաթի համաձուլվածքից 925 հարգի արծաթի համաձուլվածք ստանալու համար:

1) 9.3 գ
2) 10 գ
3) 9 գ
4) 10.5 գ

13 Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

1) 845
2) 999
3) 875
4) 910

14 Ի՞նչ երկարությամբ ձող է անհրաժեշտ 19.75 միլիմետր ներքին տրամագծով մատանի պատրաստելու համար, եթե ձողի հաստությունը 4.5 միլիմետր է:

1) 76.145 մմ
2) 76.745 մմ
3) 76.500 մմ
4) 76.375 մմ

15 **Նշվածներից ո՞րն է թանկարժեք մետաղ։**

1) վոլֆրամը
2) արծաթը
3) տիտանը
4) մոլիբդենը

16 **Նշվածներից ո՞րն է խորհուրդ տրվում կիրառել սառը արծնեպատված (էմալապատված) իրերի վերանորոգման ժամանակ։**

1) երկարատև տաքացումը
2) կոշտ մեխանիկական հղկումը
3) հղկաթղթումը (մանր հղկաթղթով)
4) թամբլերային փայլեցումը

17 **Նշվածներից ո՞րն է քարերի տեղադրման տեսակ։**

1) անշարժ
2) բորներ-կրապանային
3) շարժական
4) բորներային

18 **Ո՞ր ջերմաստիճանում չի հալվի ոսկին։**

1) 1063 °C
2) 1065 °C
3) 960,5 °C
4) 2988,8 °C

19 **Ո՞ր գործողությամբ պետք չէ սկսել զարդերի վերանորոգումը։**

1) գրանցմամբ
2) զոդմամբ
3) լվացմամբ
4) կշռմամբ

20 **Հետևյալ գործիքներից ո՞րն է օգտագործվում լարաձգման ժամանակ։**

1) ծծմբային թթուն
2) մեղրամոմը
3) հարթաշուրթը
4) վակումը

21 **Տրվածներից 3-ը օգտագործվում են գլոցման և լարաձգման եղանակով մշակման ժամանակ։ Նշել դրանց համարները։** ***(3 միավոր)***

1. Զառը
2. Գայլիկոնը
3. Լարաձգման տախտակը(ֆիլլեր)
4. Ֆոեզները
5. Գծագրական կարկինը
6. Մեղրամոմը
7. Ձուլումը
8. Կլորաշուրթը
9. Շտանգեն-ցիրկուլը

22 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում փականագործական աշխատանքների կատարման ժամանակ։ Նշել դրանց համարները։** ***(3 միավոր)***

1. Խարտոցը
2. Մուրճը
3. Մոմի զոդիչը
4. Հատիչը
5. Գայլիկոնը
6. Նրբասղոցը
7. Մոդելային մոմը
8. Ֆտորաջրածնային թթուն (պլավիկյանը)
9. Շտանգեն-ցիրկուլը

23 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում ձուլման եղանակով մանրակների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Գիպսը
2. Մուֆելային վառարանը
3. Գլոցման սարքը
4. Ունելյակը (պինցետ)
5. Ապակյա խառնիչ ձողը
6. Հալամանի բռնիչը
7. A4 ֆորմատի տպագրական թուղթը
8. Զոդանյութը (припой)
9. Խառնիչը (միքսեր)

24 **Տրված պնդումներից 3-ը համապատասխանում են մասնագիտական ներածության և նյութագիտության դրույթներին: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Ոսկու հալման ջերմաստիճանն է 1083^0C-ը:
2. Ռոդիումը սպիտակ դեղնավուն մետաղ է, կարծր, քիմիապես կայուն է թթունների միջավայրում, բնության մեջ ռոդիումը հանդիպում է ինքնածին արծաթի հետ:
3. Պալադիումի քիմիական նշանն է՝ Pt:
4. Չժանգոտվող պողպատները պարունակում են փոքր քանակությամբ օսմիում և ռուտենիում:
5. Իրիդիումի խտությունը՝21,45գ/սմ^3 է:
6. ՀՀ-ում ընդունված պալադիումի համաձուլվածքն է՝ 750-ը:
7. ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքն է՝ 916-ը:
8. ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքն է՝ 800-ը:
9. ՀՀ-ում ընդունված պլատինի համաձուլվածքն է՝ 900-ը:

25 **Տրվածներից 3-ի օգտագործումը պարտադիր *չէ* շղթաների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Զոդանյութը
2. Զոդման սարքը
3. Ծծմբային թթուն
4. Հալումը
5. Ազոտային թթուն
6. Զոդումը
7. Գլոցումը (վալցովկան)
8. Գրիչը
9. Նրբախարտոցը (նաթֆիլը)

26 **Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Մուրճը
2. Նրբախարտոցը
3. Կշեռքը
4. Արծաթը (Ag)
5. Վոլֆրամ (W)
6. Լարաձգման տախտակ (ֆիլլեր)
7. Շտանգեն-ցիրկուլը
8. Միկրոմետրը
9. Պղինձը (Cu)

27 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում ոսկյա իրերի նորոգման աշխատանքների կատարման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Կշեռքը
2. Փայլեցման սարքը
3. Ոսկու զոդանյութը
4. Շտանգեն-ցիրկուլը
5. Արքայաջուրը
6. Ինժեկտորը
7. Խոշորացույցը
8. Միկրոմետրը
9. Արծաթի զոդանյութը

28 **Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական զարդերի հավաքման և մշակման պրոցեսի ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Ռետինի մամլիչը (վուլկանիզատորը)
2. Անագե զոդանյութը
3. Ձուլամոմը
4. Բոռ-մեքենան
5. Ինժեկտորը
6. Ոսկերչական դազգահը
7. Սառը արծնը (էմալ)
8. Զոդումը
9. Մոմի զոդիչը

29 **Տրվածներից 3-ը *չի* օգտագործվում մոդելային մոմից մանրակների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Նրբասղոցը
2. Այրիչը
3. Գծագրական կարկինը
4. Ազոտական թթուն
5. Խարտոցը
6. Չափիչ գործիքը
7. Բուրան
8. Մուրճը
9. Լանցետը

30 **Տրվածներից 3-ը օգտագործվում են հյուսվածքային տեխնիկայով (Ֆիլիգրան) կիսապատրաստվածք ստանալու համար: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Ինժեկտորը
2. Մոմի զոդիչը
3. Խոշոր ֆրեզները
4. Ռետինե մամլիչը
5. Հարթաշուրթը
6. Ազոտային թթուն
7. Ռետինե կաղապարը
8. Թիթեղային զոդանյութը
9. Լարաձգման տախտակը